Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2025 թվականի փետրվարի 10-ին, ժամը 09^{00}-ից մինչև 18^{00}-ն** *ՀՀ* փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Ջաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- ***ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն:***
- ***«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունում:***

1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը (ընտրությունը)** սկսվում է **2025 թվականի փետրվարի 10-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին**:
2. ***ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2025 թվականի հունվարի 13-ից (ներառյալ) և ավարտվում է 2025 թվականի հունվարի 18-ին (ներառյալ).***
3. ***ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2025 թվականի հունվարի 19-ից (ներառյալ) և ավարտվում է 2025 թվականի փետրվարի 8-ին, ժամը 18^{00}-ին:***
4. **2025 թվականի փետրվարի 9-ը համարվում է լռության օր:**
5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով**
7. **Վարկանիշային կարգով գաղտնի քվեարկության ժամանակ ընտրողը նշում է կատարում խորհրդի անդամների իր նախընտրած թեկնածուների օգտին, որը չպետք է գերազանցի՝ 6 (վեց) թեկնածուների թվաքանակը:**
8. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:
9. *ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության նախագիծը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելու է ընդհանուր ժողովի հրավիրված օրվանից ոչ ուշ քան առնվազն 14 օր առաջ: Հայտարարության վերաբերյալ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու առաջարկները կարող եք գրավոր ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ նախագիծը Պալատի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվանից յոթնօրյա ժամկետում:*

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից: